4 նոյեմբերի 2010 թվականի N 1463 -Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2007
ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 30-Ի N 1038-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ
ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ո ւ մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի օգոստոսի 30-ի <<Հայաստանի Հանրապետության բարձրագույն մասնագիտական կրթության մասնագիտություններին ցանկը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի նոյեմբերի 9-ի N 1933-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին>> N 1038-Ն որոշման հավելվածի՝ Հայաստանի Հանրապետության բարձրագույն մասնագիտական կրթության մասնագիտությունների ցանկում կատարել հետևյալ լրացումները՝

1) ցանկը 032500 տողից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 032600 և 032700 տողերով.

<<

032600	Եկեղեցաբանություն	62	Եկեղեցաբանության բակալավր
		68	Եկեղեցաբանության մագիստրոս
032700	Եվրոպագիտություն	68	Եվրոպագիտության մագիստրոս

>>

2) ցանկը <<300000 Ռազմական կրթություն>> մասնագիտությունների խմբից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 310000 և 310100 տողերով.

<<

310000	Ոստիկանական կրթություն		
310100	Ոստիկանական գործ	62	ոստիկանության բակալավր
		68	ոստիկանության մագիստրոս

>>:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից։

10_1463

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Տ. ՍԱՐԳՍՅԱՆ

2010 թ. նոյեմբերի
Երևան